«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա ՝ Միջին և ավագ նախադպրոցական տարիքի երեխաների ազգային, բարոյական և հայրենասիրական դաստիարակություն

Հաստատություն ՝ Կապանի թիվ 4 ՆՈՒՀ

Դաստիարակ ՝ Սիրանուշ Փարսադանյան

Ղեկավար՝ Ժաննա Ավետիսյան

2023

Բովանդակություն

1. Ներածություն
2. Ծրագրի արդիականությունը
3. Ծրագրի բովանդակությունը
4. Ծրագրի մասնակիցները
5. Ծրագրի նպատակները
6. Նպատակին հասնելու գործողությունները
7. Ազգային , բարոյական և հայրենասիրական դաստիարակության իրականացման հիմնական ուղղությունները
8. Ազգային ,բարոյական և հայրենասիրական դաստիարակության իրականացման հիմնական միջոցները
9. Ազգային, բարոյական և Հայրենասիրական դաստիարակությունը ժողովրդական բանահյուսության միջոցով
10. Ազգային ,բարոյական և հայրենասիրական դաստիարակությունը երժշտական գործունեության (երգ,պար,երաժշտական խաղ) միջոցով
11. Դաստիարակի աշխատանքային պլանի կազմման օրինակելի ձև
12. Ճանաչողական –ստեղծագործական նախագծերի, զրույցների թեմաներ
13. Ծնողների և երեխաների համատեղ գործունեություն
14. Աշխատանք ծնողների հետ
15. Հաջորդ ուսումնական տարվա
16. Պայմաններ, որոնք կապահովեն դրական արդյունքներ
17. Ազգային բարոյական նհայրենասիրական դաստիարակության ակնկալվող վերջնարդյունքները
18. Օգտագործված գրականության ցանկ
19. Հայրենասիրական երգերի,ազգային պարերի,ծիսական խաղերի երաժշտական փաթեթ

Ազգային, բարոյական և հայրենասիրական դաստիարակությունը

Երեխայի վրա մանկավարժական ազդեցության նպատակաուղղված գործընթաց է,որը միտված է երեխայի մեջ ձևավորելու բարոյական գիտակցություն և վարքագիծ, սեր և հարգանք ընտանիքի, իր ազգային պատկանելիության, հայրենիքի և հասարակության նկատմամբ:

<u>Բանալի բառեր</u>

բարոյական վարքագիծ

անձնազոհություն

պարդասիրություն

ընկերասիրություն

լավն ու վատը տարբերելու կարողություն

կարգապահություն

պատասխանատվություն

հանդուրժողականություն

ներողամտություն

ապրումակցելու կարողություն

ազգային –հայրենասիրական դաստիարակություն ընտանիք և հայրենիք

բառերի գիտակցում և արժևորում պատկանելիության գիտակցում

Ազգային Արդիականությունը

Կյանքն անընդհատ գտնվում է շարժման և զարգացման մեջ և դարի խնդիր է այդ ընթացքի մեջ պահպանել ազգայինը: Այսօրվա երեխաները մեծանում են մի ժամանակաշրջանում, որը էականորեն տարբերվում է իրենց ծնողների ապրած ժամանակներից՝ տարբեր արժեքներ, իդեալներ, կանոններ: Էական խնդիր է պահպանել, ազգայինը, սերնդից սերունդ փոխանցել մնայուն արժեքները՝ սերը ընտանիքի, մերձավորի, քաղաքի, հայրենիքի նկատմամբ և հայ ժողովրդին բնորոշ այլ էթնիկ հատկանիշներ: Մենք ապրում ենք շատ դժվար ժամանակաշրջանում, երբ շեղումները դառնում են նորմալ: Նորմալ է համարվում ցանկացած գնով խուսափել զինվորական ծառայությունից, դավաճանել հայրենիքը, նետել աղբը մեքենայից, ջարդել ծառերը և այլն: Հայ հասարակության մեջ նկատվում է անհատի, ընտանիքի, հասարակության և պետության զարգացման արժեհամակարգի դաստիարակության նկատմամբ հասարակական գիտակցության նվազումը , որն էլ հանդիսանում է ընտանիքի, հասարակության պետության և անվտանգության ցածր մակարդակի զարգացման պատճառներից մեկը: Այս ամենը ահազանգ է, որ պետք է ավելի ,մեծ ուշադրություն դարձնել մատաղ սերնդի ճիշտ և համակողմանի դաստիարակության և զարգացման գործին: Նախադպրոցական տարիքի երեխաների ազգային, բարոյական, հայրենասիրական դաստիարակությունը ժամանակի պահանջ է:

Թեմայի հրատապությունը պայմանավորված է ազգային անվտանգության նկատմամբ սպառնալիքի աճով:

Կարևորելով խնդրի արդիականությունը որոշվեց համայքային ենթակայությամբ գործող ՆՈՒՀ-երի միջին և ավագ խմբերում՝ ներդնել և առավել խորացված իրականացնել երեխաների ազգային, բարոյական և հայրենասիրական դաստիարակությունը:

Ծրագրի բովանդակություն

Նախադպրոցական տարիքից պետք է երեխաների մոտ ձևավորել հստակ կողմնորոշում կյանքի նկատմամբ,նրանց մոտ դաստիարակել բարոյական սկզբունքներ և հարգանք ընտանիքի, հարգանք հայրենիքի անցյալի և ներկայի,սրտացավություն՝ ապագայի նկատմամբ:
Նախադպրոցական տարիքի՝ որպես անձի անհատականության ձևավորման ժամանակաշրջանի արդյունավետությունն եզակի է: Եվ հարցը միայն նրանում չէ,որ հենց այս տարիքում է հնարավոր առավել արդյունավետ զարգացնել անհատի կարողությունները, այլ նրանում ,որ առավել մեծ կամ ուշ տարիքում այդ կարողությունները նվազում են և այն ինչ չի իրականացվել նախադպրոցական տարիում, դպրոցական տարիքում դժվարությամբ է իրականացվում և նույն արդյունավետությունը չի ունենում : Նախադպրոցական տարիքը երեխայի զարգացման ամենազգայուն ժամանակաշրջանն է և բնութագրվում է իր ուրույն տարիքային առանձնահատկություններով՝ հնազանդությամբ , կանխատեսելիությամբ, դյուրահավատությամբ, ընդօրինակելու հակումով, մեծահասակների ՝ երեխաների վրա ունեցած մեծ ազդեցությամբ և այլն և նպատակահարմար ժամանակաշրջան է երեխայի սոցիալական և բարոյական դաստիարակության հիմքերը դնելու համար:
Ազգային հայրենասիրական դաստիարակությունը բովանդակությամբ բազմաբնույթ է և նախադպրոցական տարիքում հնարավոր չէ միանգամից ամբողջական պատկորացում տալ դրա վերաբերյալ: Սերը հայրենիքի նկատմամբ պետք է սկսել երեխայի շրջապատող աշխարհից ՝ ընտանիք, փողոց, բակ: Ընտանիքի, ընտանեական ավանդույթների նկատմամբ հարգանքի, սիրո զարգացումը նախադպրոցական տարիքի երեխաների բարոյական և հայրենասիրական դաստիարակության առաջին քայլն է:
Հայրենասիրական դաստիարակությունը սկսվում է մոր, հայրիկի, պապիկի, տատիկի, եղբոր, քրոջ նկատմամբ վերաբերմունքից: երեխան ընտանիքում հայտնաբերում , գտնում է իր հայրենիքը: Ընտանիքը՝ նրա ամենամոտ, ամենահարազատ շրջանակն է, որտեղ նա բացահայտում է այնպիսի արժեքներ ինչպիսիք են << սեր>>, <<ներողամտություն >>, << աշխատանք >>, << պատասխանատվություն>>, << հայրենիք>> և այլն:

Հայրենասիրությունը բարոյական զգացում է: Հոգեբանները հաստատում են, որ բարոյական հատկությունները չեն կարող առաջանալ բնական <<հասունացման >> միջոցով: Դրանց զարգացումը և ձևավորումը իրականացվում է աստիճանաբար և կախված է կրթության միջոցներից, մեթոդներից և այն պայմաններից, որտեղ ապրում երեխան:

Ուսուցիչների և ծնողների առաջնային խնդիրներից մեկը երեխաների մոտ հնարավորինս շուտ սեր և հարգանք արթնացնելն է իրենց ընտանիքի, հայրենի հողի, քաղաքի , հայրենիքի, մանկապարտեզի, փողոցի նկատմամբ, ձևավորել հարգանք հայկական բանակի, հայ զինվորի, հպարտություն ՝ իր ազգային պատկանելիության , հայրենիքի ձեռքբերումների , նվաճումների, հետաքրքրություն՝ հասարակական կյանքի նկատմամբ: Հայրենասեր անհատ, քաղաքացի դաստիարակելը պատասխանատու և բարդ խնդիր է , որի լուծումը պետք է տրվի նախադպրոցական տարիքում: Երեխայի մտավոր , հուզական , շարժողական, բարոյական զարգացումը բարոյական և հայրենասիրական դաստիարակության հիմնական միջոցներն են , իսկ հիմնական ձևը աշխատանքն է ՝ բարի գործեր կատարելու ցանկությունը և հայրենիքին ծառայելու պատրաստակամությունը:

Ծրագրի մասնակիցները

Մանկավարժական անձնակազմ

երեխաներ

ծնողներ

Ծրագրի նպատակները

- Դաստիարակել համակողմանի զարգացման անհատներ, հասուն, պատասխանատու մարդիկ, արժանապատիվ Հայաստանի քաղաքացիներ, ովքեր հպարտ են իրենց ազգությամբ:
- Ձևավորել գիտելիքներ իր ազգային պատկանելիության վերաբերյալ, ձևավորել ազգային մտածելակերպ:
- Ձևավորել նախնական գիտելիքներ պետություն , անկախություն արժեքների վերաբերյալ, բացատրել դրանց փոխկապակցվածությունը, անհրաժեշտությունը, դերը և նշանակությունը երկրի,յուրաքանչյուր մարդու կյանում: Ձևավորել պատկերացում , որ առանց պետության, անկախության մարդը կորցնում են իր անհատականությունը , աղգային դիմագիծը:
- Ձևավորել պատկերացումներ ընտանիքի, ընտանեկան հարաբերությունների, ընտանեկան ավանդույթների վերաբերյալ, զարգացնել կապվածություն , սեր և հոգատար վերաբերմունք ընտանիքի անդամների հանդեպ:
- Նախադպրոցականի մոտ ձևավորել հայրենասիրության վերաբերյալ հստակ պատկերացումներ, դատողություններ և գնահատականներ:
- Ընդլայնել գիտելիքները պետական տոների և հիշատակի օրերի վերաբերյալ:
- Ծանոթացնել մանկապարտեզի , հարազատ քաղաի/գյուղի ավանդույթներին, տոներին, փառատոններին:
- Երեխաների մեջ ամրապնդել բարոյական վարքագիծ՝ հոգատարություն, պատասխանատվություն, արդարամտություն, ապրումակցելու կարողություն, ընկերասիրություն, փոխօգնություն:
- Ձևավորել պատկերացումներ , գիտելիքնե ՀՀ մասին:
- Ամրապնդել գիտելիներ պետական խորհրդանիշների՝ դրոշ, զինանշան, օրհներգ, դրանց տեսքի և կառուցվածքի առանձնահատկությունների վերաբերյալ:
- Խորացնել գիտելիներ հայկական բանակի վերաբերյալ, դաստիարակել հարգանք հայրենիքի պաշտպանների, հայ զինվորի, զոհված զինվորների հիշատակի նկատմամբ:
- Ձևավորել և խորացնել գիտելիները իր հարազատ քաղաքի, պատմության, քաղաքի ներկայի, բուսական ը կենդանական աշխարհի, ավանդույթների, տոների, փառատոնների (քաղաքի տոն, կորկոտի փառատոն և այլն) վերաբերյալ:

- Ծանոթացնել և ձևավորել գիտելիքներ Կապան քաղաքի տեսարժան վայրերի /պատմամշակույթային վայրեր, այգիներ, զբոսայգիներ, հուշահամալիրներ, հրապարակներ և այլն / վերաբերյալ:
- Ծանոթացնել ազգային նվագարաններին, ազգային երգ ու պարին, խաղիկներին, ազգային ծիսակատարություններին, ազգային խոհանոցին:
- Ծանոթացնել երկրի, մարզի, հարազատ աղքաի առաջին դեմքերին,ծանոթացնել նրանց աշխատանքին, ներկայացնել նրանց դերը և նշանակությունը երկրի, մարզի, համայնքի կյանում:

Նպատակին հասնելու գործողությունները

- Նախադպրոցական հաստատություններում ազգային տոներին, ծիսակատարություններին նվիրված միջոցառումների կազմակերպում պահպանելով տոնի բուն խորհուրդն ու արարողակարգը:
- Համապատասխան հոռուստահաղորդումների , հայկական գեղարվեստական ֆիլմերից, մուլտֆիլմներից հատվածների դիտումների կազմակերպում:
- Թեմատիկ զրույցների կազմակերպում:
- Գեղարվեստական գրականության, բանահուսության տարբեր ժանրերի ընթերցում:
- Էքսկուրսիաների, այցելությունների կազմակերպում ազգային մշակույթի կենտրոններ համայնքում գործող արվեստանոցներ:
- Համագործակցություն և փոխայցելությունների կազմակերպում համայնքում գործող երաժշտական դպրոցներ, արվեստի, գեղարվեստի մանկական դպրոցներ և այլ ուսումնական հաստատություններ:
- Սոցիալական միջոցառումների կազմակերպում / շաբաթօրյակ, ցուցահանդես-վաճառք, ծառատունկ /:
- Ուսուցողական- ճանաչողական խաղերի, ազգային, ծիսական խաղերի կազմակերպում:
- Հանդիպումներ Կապան քաղաքի ստեղծագործողների, քաղաքի կյանքում մեծ ավանդ ունեցող քաղքացիների, պաշտոնյաների հետ:

Ծրագրի նպատակները

Ազգային, բարոյական և հայրենասիրական

դաստիարակության իրականացման

հիմնական ուղղությունները

- Մտավոր
- Բարոյական
- Գեղագիտական
- Էկոլոգիական
- Աշխատանքային
- Ընտանիքի համար համագործակցություն,համատեղ աշխատանք:

Ազգային բարոյական և հայրենասիրական դաստիարակության իրականացման հիմնական միջոցները

- Շրջակա միջավայր
- Ազգային մշակույթ
- Թեմատիկ պարապմուներ (թեմաները կրկնվում են և միջին , և ավագ խմբում փոխվում է միայն բովանդակությունը , ճանաչողական նյութի ծավալը և բարդությունը , պարապմունքի տևողությունը)
- Գեղարվեստական գրականություն / բանահյուսություն
- Խաղային գործունեություն
- Փառատոների, նախագծերի կազմակերպում
- Աշխատանքային գործունեություն / գործնական – պրակտիկ աշխատանք:

Ազգային, բարոյական և հայրենասիրական դաստիարակությունը ծիսական , ազգային մանկական խաղերի միջոցով

Նախադպրոցական ուսումնական հաստատություններում սանի համար ազգային ծեսի ճանաչման ամենաարդյունավետ ձևը խաղն է: Ազգային, ծիսական մանկական խաղերը նպաստում են երեխաների ֆիզիկական , հոգեկան , մտավոր հնարավորությունների զարգացմանը: Խաղը հնարավորություն է տալիս երեխաներին ՝ իրենց համար առավել հասանելի եղանակով և բարոյական արժեքներով ճանաչել կյանքը, հասարակական երևույթները և այլն: Ազգային, բարոյական և հայրենասիրական թեմաներով դիդակտիկ խաղերը հարուստ պաշար են և հնարավորություն են տալիս երեխաներին զբաղվել տարատեսակ գործոնեությամբ ՝ մտավոր, շարժողական, հուզական և այլն; Նրանց մղում են ինքնուրույն գործունեության, նրանց մոտ առաջացնում են մտածելու, ապրումակցելու, խաղի խնդրի լուծման համար ինքնուրույն ակտիվ լուծումներ որոնելու, խաղի պայմաններին և հանգամանքներին ենթարկվելու, ընկերների հետ փոխհարաբերվելու կարողություններ: Երեխաների հարաբերությունները խաղի ընթացքում և խաղի նկատմամբ նպաստում են նրանց սոցիալականացմանը:
Ծիսական խաղերը, բացի հետաքրքիր ու տպավորիչ լինելուց, զարգանում են մանր և խոշոր մկանային մոտորիկան, ընդհանուր շարժումային համակարգը, դրանք թատրոնի նման սինթետիկ արվեստ են դառնում, որոնք ինտեգրում են ինչպես երեխայի զարգացման բոլոր ոլորտները, անյպես էլ գործունեության տարբեր ձևերը: Աշխատանքի ընթացքում օգտագործված հիմնական մոթոդներից են.

- Իրավիճակների խաղարկում
- դերախաղ
- խմբային աշխատանք

Այդ խաղերը կարելի է խաղալ ինչպես համապատասխան ծեսի, այպես էլ ցանկացած ժամանակ ՝ անհրաժեշտության դեպքում:
Ծեսն այն միջավայրն է, որտեղ մասնակիցները ծեսի նախապատրաստման և իրականացման ընթացքում կիրառում են իրենց կարողությունները, հմտությունները, գիտելիքները, քայլ առ քայլ, անկաշկանդ միջավայրում, ամենօրյա արդյունավետ գործունեությամբ, լիրավ մասնակցությամբ, կարողություններ և հմտություններ ձեռք բերելով ու փոխանցելով, յուրացնում են ծեսը: Կենդանի, ազատ միջավայրում, առանց սցենարով գրված,անգիր արած տեքստի, խաղարկում են ծիսական գործողություններ՝ երգելով, պարելով, խաղալով,ինքնադրսևորվելով, տեղում իրենց ստեղծած ազատ տեսքով ներկայացնելով, իրացնելով իրենց կարողությունները, հմտությունները, գիտելիքները:

Ծիսական միջավայրում կատարում են ուսուցանված երգերը, պարերը, մասնակիցներն ազատ են իրենց ստեղծագործական մտքի մեջ, միևնույն ժամանակ նախորոք անպայման պատրաստվում են՝ ծանոթանալով ինչպես ծեսի,այնպես էլ ծեսի հետ կապված գործողությունների, ծիսական պարագաների հետ,որոշում է ինչ և ինչպես են կատարելու,որ գործողություններ են, որոնք այսօրվա կյանքով ապրողը կարող է կատարել: Միջառարկայական կապը ծեսի նախապատրաստական շրջանում և իրագործելիս:

Երաժշտություն - գիտեն և կարող են կատարել ծիսական և այլ հայկական ժողովրդական երգեր:

Պար- գիտեն և կարող են կատարել ծիսական և այլ հայկական ավանդական պարեր:

Խոսքի զարգացում-- գիտեն ծեսը, ծիսական ավանդություններ և զրույցներ, ասույթներ, առած-ասացվածքներ, բանաստեղծություններ, կարողանում են խաղարկել ծիսական գործողություններ,կարողանում են պատմել իրենց կատարածը, գեղարվեստորեն ներկայացնել, ինքնուրույն խաղարկել ստեղծագործական մոտեցում պահանջող ծիսական գործողություններ (օրինակ՝ Բարեկենդանի ծեսին):

Ֆիզկուլտուրա- գիտեն և կարողանում են խաղալ ժողովրդական, մանկական , ծիսական խաղեր:

Էկոլոգիա - կարողանում են պատրաստել ծիսական բուսական պարագաներ (օրինակ ՝ զատկական ածիկ) , գիտեն այն բույսերը, որոնք օգտագործվում են ծեսերին և ունեն դրանց մասին, այդ տարիքին համապատասխան , գիտելիքներ:

Կերպարվեստային գործունեություն - գիտեն և կարողանում են պատրաստել ծիսական պարագաներ, այդ թվում հանդերձանք, կատարել նյութի ընտրություն:

Խոհանոց - գիտեն և կարողանում են պատրաստել կամ իմանալ ազգային ծիսական և այլ կերակրատեսակներ:

Ծիսական , ժողովրդական և ազգային արվեստի դեկորատիվ կիրառական առարկաները ևս կարող են երեխաների մոտ մեծ հետաքրքրություն առաջացնել աղգային արվեստի, ավանդույթների նկատմամբ:

Ժողովրդական արվեստի տարբեր տեսակի նմուշների կիրառումը նախադպրոցականի հետ աշխատանքում ոչ միայն բարերար ազդեցություն են թողնում երեխաների ազգային դաստիարակության ուղղությամբ տարվող աշխատանքում, այլ նկատելիորեն առարկայական և շոշափելի են դարձնում ուսումնական պրոցեսը: Այս ամենը ցանկալի է իրականացնել երեխաների ակըիվ մասնակցությամբ, նրանց՝ բոլոր աշխատանքներին ակտիվ ներգրավվելով , քանի որ երեխայի համակողմանի դաստիարակության գործուն միջոց է աշխատանքային դասիարակությունը : Երեխաներին պետք է առաջարկել պատրաստել ազգային և ծիսական բովանդակությամբ ձեռքի աշխատանքի նմուշներ (խուրջին, քսակ, ազգային տարազ, ազգային տիկնիկ և այլն) : Երեխաների ազգային, բարոյական և հայրենասիրական դաստիարակությունը արդյունավետ կազմակերպելու համար կարելի էկիրառել << Նախագծերի կազմակերպման >> մեթոդը (<< Սիրիր և ճանաչիր քո հողը>>, << Հայկական ժողովրդական ավանդույթներ>>, << Սուրբ ծննդյան տոնակատարություն>>, << Ազգային ծեսը մանկապարտեզում>> և այլն), որի ընթացքում երեխաների հետ խաղային եղանակով կարելի է կազմակերպել տարբեր իրավիճակներ, բեմականացումներ և այլն:

Ազգային , բարոյական և հայրենասիրական դաստիարակությունը ժողովրդական բանահյուսության միջոցով

Երեխայի ազգային, բարոյական, հայրենասիրական դաստիարակության գործում կարևորվում է ազգային , ժողովրդական բանահյուսության դերը :Այն անսպառ աղբյուր է հայեցի դաստիարակության համար , որի միջոցով դաստիարակվում են ազգային լավագույն հատկանիշները: Հեքիաթներում , ասացվածքներում ,հանելուկներում ամփոփված էժողովրդական իմաստությունը ,որը դարեր ի վեր կրթել է մատաղ սերնդին ,նրանց մեջ սերմանել հպարտություն իրենց ազգության, երկրի ,սեր՝ մայրենի լեզվի,ընտանիքի իրենց արմատների նկատմամբ:Երեխաները ծանոթանալով հայ բանահյուսությանը կհամոզվեն ժողովրդական խոսքի ճշմարտության մեջ, իրենց խոսքում կներառեն և կօգտագործեն բանահյուսությունից վերցված փոխաբերական արտահայտություններ ,դիպուկ խոսքեր ,հաճույքով կգուշակեն հանելուկներ ,կարտասանեն կկատարեն ազգային խաղիկներ ,փոքրիկ բանաստեղծություններ և այլն:

Նախադպրոցական կրթական գործընթացում առավել օգտագործվող բանահյուսական ժանրերն են .

- Առակ
- Հեքիաթ
- Հանելուկ
- Ասացվածք
- Առասպել
- Ավանդություն
- Էպոս

Դաստիարակը բանահյուսության ժանրերը և առանձին տարրերը գործնականում կարող է կիրառել՝

- Երաժշտության պարապմունքներին
- Դիդակտիկ խաղերում
- Թատերական գործունեություններում
- Ռեժիմային պահերին
- Կերպարվեստային գործունեության մեջ և այլն:

Նախադպրոցական տարիքի երեխաների առօրյայում բանահյուսական ժանրերի և տարրերի օգտագործումը դրական ազդեցություն է ունենում երեխայի զարգացման վրա: Բանահյուսական ժանրերը որպես բարոյական դաստիարակության արդյունավետ միջոցներ՝ երեխայի մեջ ձևավորվում են հաջողության հոգեբանություն, բարոյական արժեքներ, քաջ և արդար հերոսներին ընդօրինակելու ցանկություն, սերմանում՝ սեր իր տան, ընտանիքի, հայրենիքի հանդեպ, նպաստում՝ բարեկամության և սիրո վերաբերյալ պատկերացումների ամրապնդմանը:

Մանկապարտեզում բանահյուսական ժանրերի ուսուցումը կարելի է կազմակերպել հետևյալ միջոցներով.

- Պատումներ (ազատ վերապատում)
- Արտահայտիչ ընթերցանություն (համապատասխան տոնայնությամբ, դեմքի արտահայտություններով)
- Զրույցներ հեքիաթի, առասպելի ..... շուրջ (հերոսների գործողությունների վերլուծություն)
- Թատերական գործունեություն (մատնային, սեղանային, տիկնիկային թատրոն նայլն)

Ազգային , բարոյական և հայրենասիրական

դաստիարակությունը երաժշտական գործողության

/ Երգ, պար, խաղ/ միջոցով

Մանկավարժության մեջ երաժշտությունը երեխայի դաստիարակության կարևոր և արդյունավետ միջոցներից է;Երաժշտությունը արվեստի այն եզակի ճյուղն է,որի հետ երեխաները շփում են ի ծնե;Այն նպաստում է այլ մարդկանց ուրախություններն ու տխրությունները զգալու,կյանքի հանդեպ գեղեցիկ վերաբերմունք ձևավորելու նբարոյական այլ որակներ(սեր,բարություն,կամքի ուժ և այլն)զարգացմանը;Երաժշտական դաստիարակության նպատակն է երեխաներին հաղորդակից դարձնել ազգային(հայկական ժողովրդական և ազգագրական) նհամամարդկային երաժշտական մշակույթին,ինչպես նաև ծանոթացնել ազգային նվագարաններին(դուդուկ,զուռնա,թառ,քամանչա,դհոլ,քանոն և այլն);Երաժշտության դաստիարակի հիմնական խնդիրներից մեկը երեխայի կյանքում,կենցաղում<<գեղեցիկի>> գոյության և <<գեղեցիկը>> նկատելու անհրաժեշտության դաստիարակումն է,որը նպաստում է երեխաների մեջ բարոյական որակների ձևավորմանը,կոլեկտիվում նրանց փոխհարաբերվելու կարողությունների զարգացմանը:
Երաժշտական գործունեությունը երեխայի համակողմանի զարգացման և դաստիարակության կարևոր օղակներից է: Այն զարգացնում է ոչ միայն միտքը ,այլև զգայարանները:

Նախադպրոցական տարիքում նպատակահարմար է երաժշտական դաստիարակությունն իրականացնել ազգային երաժշտության միջոցով: Հայ մեծագույն մանկավարժներն ամենամեծ դպրոցը համարել են ժողովրդական դպրոցը և իրենց ստեղծած կրթական համակարգը փորձել են մոտեցնել ժողովրդական դպրոցին :Մանկապարտեզում հատկապես ոչ մի զիջում չի կարելի կատարել:Երեխան բաց աչքերով նայում է հրաշք աշխարհին , և թե ինչ կլսի ու կտեսնի՝ մեզանից է կախված : Երեխայի բաց հոգու աչքերի աչքերի մեջ ամենազորեղը առաջին տպավորությունն է , և դա հետագայում սնում է նրա սիրտն ու հոգին , թևավորում նրա երևակայությունը , ուրեմն նախ և առաջ նրան պետք է մատուցել ամենալավը և փորձվածը՝ ամենալավ երգերն ու պարերը , ամենալավ խաղերն ու գույները , այսինքն՝ նյութի թե ընտրության և թե մատուցման ձևը պիտի լինի հնարավորին չափ միակը ,լավագույնը :

Մասնագիտական գրականության մեջ նախադպրոցական հաստատություններում երեխաների երաժշտական դաստիարակության ուղղությամբ խորհուրդ է տրվում իրականացնել գործունեության հետևյալ տեսակները .

Երաժշտության ունկնդրում . դաստիարակել հետաքրքրություն և հուզական վերաբերմունք տարբեր ժանրերի երաժշտության նկատմամբ ,

Երգեցողություն .զարգացնել երաժշտության ընկալումը, ծանոթ ստեղծագործություններն ըստ նախանվագի կամ մեղեդի հիշելու և տարբերելու կարողությունը , ճիշտ ձայնակազմավորումը , ձայներանգի մաքրությունը : Երեխաները ձեռք են բերում որոշակի պատկերացում ՝ երաժշտական հնչյունի բարձրության ,տեմբրի ,հնչյունի ուժգնության մասին ,երգերում և երաժշտական խաղերում ձգտում են կերպարի արտահայտիչ կատարմանը : Ձայնաձավալը ՝ դո1 /ռե1/- սի1,դո2 :

Երաժշտառիթմիկ շարժում , պարեր ,խաղեր. ձևավորել երեխաների կատարողական ունակությունները ,երաժշտության տակ կատարվող ռիթմիկ շարժումների արտահայտչականությունը , պարերում և երաժշտական խաղերում իմպրովիզացիոն շարժումներ կատարելու կարողությունը :

Երաժշտական խաղեր

Երաժշտական խաղերը երեխաների երաժշտական ընկալունակության զարգացման կարևոր միջոցներից են: Երեխաները, երաժշտության ուղեկցությամբ կատարելով տարբեր շարժումներ և խաղային գործողություններ , ավելի լավ են զգում երաժշտական ստեղծագործության բնույթը ,բովանդակությունը և կառուցվածքը:

Հայտնի է, որ եթե երաժշտական խաղը համապատասխանում է երեխաների տրամադրությանը և ցանկություններին , առաջացնում է ակտիվություն և հետաքրքրություն : Իսկ դա էլ իր հերթին նպաստում է ուսուցանվող նյութի արագ ընկալմանն ու հետագա խորացմանը:

Խաղային երգերի բեմականացումներ

Երեխաների ինքնուրույնության և ստեղծագործական նախաձեռնության զարգացման նպատակով կարևոր են խաղային երգերի բեմականացումները:Այդպիսով նրանք ինքնուրույն պատկերում են երգի

Բովանդակությունն ու կերպարներն այնպես ,ինչպես իրենք են ընկալում: Նախադպրոցականների ավագ խմբում երեխաների ստեղծագործական ընդունակությունների զարգացման նպատակով կարևորվում է բեմականացնել խաղային երգերը ,խաղերի բովանդակության մեջ ներառել կերպարային շարժումների նոր տարբերակներ :

Նախադպրոցական տարիքի երեխաների ծանոթացումը ազգային, ժողովրդական երաժշտությանը կարելի է կազմակերպել տարբեր երաժշտական նախագծերի միջոցով ՝ հիմքում դնելով հայկական , ազգային ծիսական տոները /<<Ամանոր>>, <<Սուրբ ծնունդ >>, <<Զատիկ>>, <<Խաղողօրհնեք >>, <<Բարեկենդան >> ……/: Այս տարիքի երեխաների շրջանում ազգային երաժշտության նկատմամբ հետաքրքրություն և սեր արթնացնելու համար արդյունավետ միջոց է թատերական գործունեության տարբեր ձևերի կիրառումը՝
երգերի , հեքիքթների բեմադրություններ, երաժշտական միջոցառումների կազմակերպում , տիկնիկային և սեղանային թատրոն և այլն :

Ազգային երաժշտության ,պարերի, խաղերի ուսուցման հետևողական ,համակարգված , գրավիչ կազմակերպված աշխատանքը նպաստում է երեխաների գեղագիտական և մտավոր զարգացմանը , զարգացնում ստեղծագործական հմտություններ , ուսուցանում ՝ գիտակցված վերաբերմունք ազգային մշակույթի ընկալման նկատմամբ :

Միջին և ավագ նախադպրոցական տարիքի երեխաների ազգային, բարոյական, հայրենասիրական դաստիարակությունը երաժշտական գործունեության միջոցով արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ է.

- Երաժշտության պարապմունքներն օգտագործել գեղարվեստական ստեղծագործություններ ,հորինել պատմվածքներ տարբեր երգերի վերաբերյալ :
- Կազմակերպել և անցկացնել երաժշտական ներկայացումներ , միջոցառումներ :
- Պարբերաբար զբաղվել երաժշտական ռիթմիկայով , նվագել ազգային երաժշտական գործիքներ , սովորեցնել խմբով երգել / երգչախմբային երգեցողություն /,
- Կազմակերպել ծիսական խաղեր ,կազմել ծիսական տոների երաժշտական և պարային փաթեթներ :
- Երեխաներին ուսուցանել մանկական ժողովրդական , ազգային պարեր :
- Պարբերաբար կազմակերպել ազգային երգերի , դասական երաժշտության ունկնդրումներ :
- Կազմակերպել այցեր քաղաքում գործող երաժշտական դպրոցներ, ակտիվացնել համագործակցությունը մշակութային օջախների հետ , համատեղ կազմակերպել միջոցառումներ :

Դաստիարակների աշխատանքային պլանի

կազմանն օրինակելի ձև

Նախադպրոցականի ազգային, բարոյական, հայրենասիրական մտածողության զարգացմանը նպաստում են հատուկ մշակված պարապմունքները: Պարապմունքների գերխնդիրն է երեխայի մեջ դաստիարակել ազգային մտածելակերպ և արժանապատվություն, բարոյական ճիշտ վարքագիծ և արժեհեմակարգ : Պարապմունքի արդյունավետությունն անմիջականորեն կախված է դաստիարակից, նրա մասնագիտական կարողություններից և հմտություններից, թեմայի վերաբերյալ բավարար գիտելիքներ ունենալուց, անձնային որակներից: Դաստիարակը պենք է գանդես գա << սոցիալան ուղեկցողի>> դերում : Նա պետք է կարողանա ստեղծել բարենպաստ պայմաններ և զարգացնող դաստիարակության համար: Այս նպատակին հասնելու համար դաստիարակին առաջադրվում են հետյալ խնդիրները.

1. Ուսումնասիրել թեմայի վերաբերյալ մեթոդական գրականություն, ծանոթանալ մանկավարժական առաջավոր փորձին,
2. արդյունքի հասնելու և պարապմունքները երեխաների համար գրավիչ դարձնելու համար դրսևորել ստեղծագործական մոտեցում, մշակել ինտերակտիվ մեթոդներ և հնարներ,
3. խմբում ստեղծել առարկայական զարգցաղնող միջավայր (ստեղծել ազգային, հայրենասիրական անկույններ, երեխաների ազգային, բարոյական , հայրենասիրական դաստիարակության վերաբերյալ խաղերի թղթապանակ, կատարել բարոյահոգեբանական դաստիարակության դիդակտիկ խաղերի ճիշտ ընտրություն, մանկապարտեզի կամ խմբի համար մշակել պարտադիր կատարման ենթակա կանոններ ՝ համապատասխան նկարներով ,(օրինակ ՝ չի կարելի ստել, կռվել, ջարդել և այլն),
4. ունենալ հստակ մշակված թեմատիկ, իրատեսական և կիրառական աշխատանքային պլան, հեռանկարայի պլան
5. ունենալ ծնողական ակտիվի հետ համագործակցելու պլան, կազմակերպել թեմային վերաբերվող զրույցներ,հարցումներ խաղեր,
6. աշխատանքի հաշվետվողական ություն՝ կիսամյակի ավարտին և տարվա վերջին իրականացված աշխատանքի վերլուծություն, աշխատանքի ստեղծագործական զեկույց (սլայդներ, ալբոմի պատրաստում, ֆիլմի ստեղծում, …) :

Դաստիարակի աշխատանքային պլանի բովանդակությունը

- Ժամանակացույց
- Աշխատանքի բովանդակությունը
- Աշխատանքի նպատակը՝ խնդիրները
- Նպատակին հասնելու գործողությունները՝ մեթոդները
- Գործնական աշխատանք (ըստ ամիսների և ուղղությունների)
- Սահմանված վերջնաարդյունքները
- Հեռանկարային պլան
- Ինքնակրթություն
- Օգտագործած գրականության ցանկ:

Ճանաչողական ստեղծագործական նախագծերի զրույցների թեմաներ

- << իմ ընտանիքը >>, << Իմ մանկապարտեզը >>:
- << Փողոցը, որտեղ ես ապրում եմ >>:
- << Ճանաչողական էքսկուրսիա դեպի քաղաքի պատմության թանգարան>>:
- Ազգային մոտիվներով նախատոնական և հետծննդյան տոների կազմակերպում << Իմ հայկական Ամանորը՝ Նավասարդը…>>:
- << Հայրենիքի պաշտպաններ>>, << Ես զինվոր եմ >>, <<Խաղաղության երաշխավորները>>:
- << Զմեռային ստեղծագործուհի շինարար>>:
- << Մայրս աշխարհում ամենալավն է >> , << Մայրս միակն է >>, << Ինչ է կարողանում անել իմ տիկնիկը >>:
- << Տիեզերք >> խորագրով կարճաժամկետ նախագիծ, << Տիեզերքի իմ փոքրիկ անկյունը >> թեմայով լուսանկարչական մրցույթ:
- << Հազթանակի օր >>՝ << Հաղթանակների ամիս >>:
- << Կապան իմ հարազատ օրրան >>:

Ծնողների և երեխաների համատեղ գործունեությունը

/ Աշխատանքի թեմաների և ձևերի օրինակներ/

- << Մեր քաղաքի փողոցները >> լուսանկարների ցուցահանդես:
- << Երեխաների ազգային- ստեղծագործական աշխատանքներ>> թեմայով ցուցահանդես :
- << Մայրիկիս դիմանկարը >> մանկական լուսանկարների ցուցահանդես:
- << Տիեզերքը երեխաների աչքերով >> , << Խաղաղություն- ամենակարևորը աշխարհում >> ՝ << Խաղաղության գույները>> մանկական ստեղծագործական աշխատանքների ցուցահանդես:
- << Հեքիաթի ժամ >>, << Հեքիաթի հյուրն է >> … խորագրով ազգային , ժողովրդական , բանահյուսական ստեղծագործությունները մանկապարտեզում նախագիծ – երեխաների համար յուրաքանչյուր շաբաթ հեքիաթ է ընթերցում իր ընտանիքի անդամներից մեկը ՝ հայրիկը, մայրիկը, տատաիկը, պապիկը, քույրը, եղբայրը … Մանկապարտեզում տեսնելով իր ընտանիքի անդամների երեխան մանկապարտեզը ընդունում է որպես իր համար հարազատ, ապահով վայր: կարելի է ընդգրկել նաև քաղաքի պատվավոր քաղաքացիներին, արվեստագետներին, ՏԻՄ ներկայացուցիչներինէ համայնքի ղեկավար , տեղական , ավագանու անդամ …:

Աշխատանք ծնողների հետ

/ Աշխատանքի թեմաների օրինակներ /

- Կազմել թեմային վերաբերվող հարցերի վերաբերյալ հարցաթերթեր, քննարկումներ՝
- << Ինչպես դաստիարակել փոքրիկ հայրենասեր >> խորհրդակցական զրույց, այդ թեմայով ծնողներին համապատասխան գրականության տրամադրում:
- << իմ Ընտանիքը >> ընտանեկան ճանաչողական – ստեղծագործական նախագիծ:
- << Երեխայի ազգային, բարոյական և հայրենասիրական դաստիարակությունը>> թեմայով սեմինար-պրակտիկում:
- << Ընտանիքի և ընտանեկան ավանդույթների դերը նախադպրոցական տարիքի երեխայի անհատականության ձևավորման գործում>> թեմայով զրույց:
- << Մեր քաղաքի պատմությունը >> լուսանկարների ալբոմի ձևավորում:
- << Մեր բանակը >>՝ << Հայկական բանակ >> նախագիծ:
- << Բարեկարգ մանկապարտեզ >> սոցիալական միջոցառումների կազմակերպում (տարածքի բարեկարգում, կանաչապատում, ծառատունկ,ներկապատում …):

Հաջորդ ուսումնական տարվա հեռանկարները

/ նախատեսվող աշխատանքների օրինակներ /

- Թեմայի վերաբերյալ տեսական – մեթոդական գրականության, նոր գործնական մոտեցումների ուսումնասիրում և մշակում :
- Շարունակել իրականացնել կոնկրետ միջոցառումներ << Միջին և ավագ նախադպրոցական տարիքի երեխաների ազգային , բարոյական և հայրենասիրական դաստիարակություն >> թեմայի ուղղությամբ:
- Թեմայի վերաբերյալ նոր խաղերի , խաղային վարժությունների մշակում:
- Ինքնակրթության շարունակականություն :
- Ծնողների հետ աշխատանքի նոր ձևերի, մեթոդների մշակում, համագործակցության ակտիվացում:

Պայմաններ որոնք կապահովվեն դրական

Արդյունքներ

- Յուրաքանչյուր կիրառվող ուսուցման մեթոդ և հնար պետք է լինի հումանիտար (մարդասիրական) , երեխայի անձը չնվաստացնող և համապատասխանի տարիքային առանձնահատկություններին:
- Ընտրված մեթոդները , նախատեսվող աշխատանքները պետք է լինեն իրատեսական, կիրառելի:
- Մեթոդը կիրառելու համար պետք է լինեն նախորոք նախապատրաստված պայմաններ:
- Չպետք է կիրառվեն նույն կամ նմանատիպ մեթոդներ:

Ազգային, բարոյական և հայրենասիրական դաստիարակության ականակալվող վերջնարդյունքները

Միջին և ավագ նախադպրոցական տարիքի երեխաների գիտելիքները.

1. Իր ընտանիքի և տան մասին

- Կարողանա համառոտ ներկայացնել իր կենսագրությունը ՝ երբ է ծնվել, ինչ ազգություն ունի , որտեղ է ապրում , ինչ հաստատություններ է հաճախում , ինչ սիրած զբաղմունք ունի և այլն:
- Ունենա նախնական / հստակ պատկերացում իր սեռային պատկանելիության ՝ սեռային առանձնահատկությունների, հատկանիշների, սեռադերային վարքագծի վերաբերյալ,հարգանք ՝ հակառակ սեռի նկատմամբ:
- Իմանա իր ազգային պատկանելիությունը, իր ազգային առանձնահատկությունները, իմանա թե որն է իր լեզուն, ինչ ազգային ավանդույթներ և սովորույթներ ունեն հայերը:
- Իմանա իր տան հասցեն, իր փողոցի պատմությունը / ում անունով է, իմանա և ճանաչի իր տան մոտակայքում գտնվող ուսումնական և մշակութային հաստատությունները, հուշարձանները և այլն /:
- Իմանա իր ծնողների / տատիկ, պապիկի անունները, ազգանուններն ու հայրանունները:
- Ունենա նախնական պատկերացումներ իր ընտանիքի պատմության , սովորույթների մասին:
- Իմանա և հասկանա արյունակցական կապ նշանակող բառերը (մայրիկ, հայրիկ, պապաիկ, տատիկ, քույր, եղբայր, թոռ և այլն):
- Պատկերացում ունենա ընտանեկան հարաբերությունների մասին երեխա – ծնող (հայր,մայր, եղբայր, քույր) տատիկ- պապիկ (նրանք իրենց ծնողների ծնողներն են , իրենց ծնողները ՝ նրանց երեխաները) :
- Իմանա թե ինչ մասնագիտություն ունեն իր ծնողները, որտեղ են աշխատում իր ընտանիքի անդամները, նրանց աշխատանքի կարևորությունը ՝ քաղաքի, հայրենիքի զարգացման գործում:
- Իմանա ընտանիքում իր պարտականությունների մասին:

2. Հայրենի քաղաքի , հայրենիքի մասին

- Գաղափար ունենա իր հայրենիքի պատմության մասին :
- Ունենա տարրական գիտելիքներ ՀՀ-ի , հայ ժաղովրդի սոցիալ – մշակույթային արժեքների , կենցաղային սովորույթների , ազգային ավանդույթների , հիշատակի և տոնական օրերի վերաբերյալ:
- Ունենա տարրրական պատկերացումներ պետություն, անկախություն արժեքների և դրանց կարևորության վերաբերյալ:
- Ունենա գիտելիքներ հայկական բանակի վերաբերյալ:
- Իմանա և ճանաչի ՀՀ պետական խորհրդանիշները:
- Ունենա գիտելիքներ ՀՀ մայրաքաղաք ՝ երևանի վերաբերյալ:
- Ունենա գիտելիքներ իր մարզի վերաբերյալ:
- Ունենա գիտելիքներ իր հարազատ քաղաքի ՝ Կապանի վերաբերյալ:
- Իմանա և ճանաչի իր երկրի, մարզի, քաղաքի առաջին դեմքերին:
- Ունենա գիտելիքներ ազգային արվեստի և արհեստների վերաբերյալ / տարբերակի արվեստ և արհեստ եզրույթները, արվեստի / արհեստիոր ճյուղերն են առավել զարգացած, ճանաչի ազգային արվեստագետներին, նրանց աշժատանքները և այլն /:



3. Ազգային մշակույթից

- Ունենա գիտելիքներ հայ ժողովրդի բանահյուսության վերաբերյալ / ժանրեր, հասկանա դրանց ժանրային տարբերությունը, կարողանա տարբերել 1-2/2-3 փոքրածավալ ստեղծագործություն:
- Իմանա ազգային ծեսերը, ավանդույթները :
- Իմանա և կարողանա վերապատմել 2-3 // 3-4 հայկական փոքրածավալ հեքիաթ:
- Իմանա և կարողանա անգիր արտասանել 2/3 հայկական բանաստեղծություն կամ հատվածներ բանաստեղծությունից :
- Իմանա և կարողանա երգել 2/3 ազգային , հայրենասիրական մանկական երգ:
- Իմանա և կարողանա պարել 2/3 -4 ազգային, հայկական մանկականպար :
- Իմանա ր կարողանա խաղալ ազգային, ծիսական խաղեր :
- Ճանաչի ազգային ավանդական խոհանոցի ուտեստները:

❖ Նախատեսվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա վերջում << Միջին և ավագ նախադպրոցական տարիքի երեխաների ազգային, բարոյական հայրենասիրական դաստիարակություն >> ծրագրի արդյունքները ամփոփել <<Ազգագրական փառատոն >> նախագծի շրջանակում:

Օգտագործվող գրականության ցանկ

1. **Статья, Сюзанна Тюльпарова**
   Консультация для воспитателей << Духовно –нравственное воспитание дошкольников спедствами мызыки>>,
   URL https://www.maam. ru/detskijsad/ konsuitacija – dlja-vospitelei-duhovno-nravstvenoe-vospitanie-doskolnikov-1235982. Html,
2. **Молодой ученый.___2017.___N 15.2 (149.2)._G . 25-30._URL: https:// moluch.ru/ archive/149/41596/, Берникова, Л.С.Воспитание любви к родному городу у старших дошкольников в образовательной деятельности**
   Радынова О.П., Катинение А. И. Паловандишвили М.П. Музыкальное воспитание дошкольников / Радынова О.П. Катинене А. И., Палавандишвили М.П.—М. академия, 2000,
3. **Статья, Стратулат Маргарита Игоревна**
   План самооброзования воспнтателя << Нравственно – патриотиченское воспитание дошкольников >> , URL:https://www.maam.ru/detskijsad/ plan-samobrazovanieja- vospitatelja01043270.html,
4. **Методическое обьединение << Этапы, формы и методы патриотического воспитание дошкольников >>, URL: https://pptonline. Org/403281,**
5. Ռ. Ծառուկյան, Հ. Միտոյան , Լ. Սմբատյան , Ն. Նիկողոսյան , << Այլընտրանքային մոդելներով 5-6 տարեկան երեխաների նախադպրոցական կրթության կազմակերպումը >>, Դաստիարակի ուղեցույց, Երևան 2010,
6. Արթուր Շահնազարյան << Երաժշտությունը նախակրթարանում >>:
7. Մարինե Սահակյան , Նախադպրոցականի ազգային դաստիարակության հիմնահարցերը Սոֆյա Արղությանի մանկավարժական հայացքներում , ուսումնաօժանդակ ձեռնարկ, Երևան մանկավարժ 2011,
8. << Մխիթար Սեբաստացի >> կրթահամալիր քոլեջ , Դիպլոմային նախագիծ Գայանե Մանուչարյան , Ժասմեն Ադամյան << Ազգային ծեսը նախակրթարանում>>, Ծեսերի , ծիսական գործողությունների իրականացում:

Եզրակացություն

Նախադպրոցական տարիքից պետք է երեխաների մոտ ձևավորել հստակ կողմնորոշում կյանքի նկատմամբ հարգանք ընտանիքի , հարգանք հայրենիքի անցյալի և ներկայի , սրտացավություն՝ ապագայի նկատմամբ : Կազմակերպել նախադպրոցական հաստատություններում ազգային տոներին, ծիսակատարություններին նվիրված միջոցառումների կազմակերպում ՝ պահպանելով տոնի բուն խորհուրդն ու արարողակարգը: Ազգային ծիսական մանկական խաղերը նպաստում են երեխաների ֆիզիկական , հոգեկան , մտավոր հնարավորությունների զարգացմանը: Երեխայի ազգային , բարոյական , հայրենասիրական դաստիարակության գործում կարևորում է ազգային , ժողովրդական բանահյուսության դերը : Այն անսպառ աղբյուր է հայեցի դաստիարակության համար, որի միջոցով երեխայի մեջ դաստիարակվում են ազգային լավագույն հատկանիշները; Երեխան ընտանիքում հայտնաբերում , գտնում է իր հայրենիքը :Ուսուցիչների և ծնողների առաջնային խնդիրներից մեկը երեխաների մոտ նարավորինս շատ սեր և հարգանք արթնացնելն է իրենց ընտանիքի , հայրենի հողի, քաղաքի ,հայրենիքի , մանկապարտեզի , փողոցի նկատմամբ, ձևավորել հարգանք հայկական բանակի , հայ զինվորի ,հպարտություն ՝ իր ազգային պատկանելիության, հայրենիքի ձեռքբերումների, նվաճումների ,հետաքրքրություն ՝հասարակական կյանքի նկատմամբ :